№ 256 ՀԻՆԳՇԱԲԹԻ 30 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1917 ՔԱՌԱՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 30 ՆՈՅԵՄԲԵՐԻ №256

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ այլեւս ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Հատնական համարները ԱՄԷՆ ՏԵՂ 20 ԿՈՊ.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ», Tiflis, Rédaction „Mschak".

Խմբագրատան տելէֆօն № 2—63

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւններ ընդունվում է ամէն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են՝ Կովկասում, յուրաքանչյուր տողերեսին 40—30 կոպ., Կովկասից դուրս՝ 60—40 կոպ.

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել թէ հին հասցէն և թէ 50 կոպ.

Բացված է բաժանորդագրութիւն

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

առաջիկայ 1918 թ. համար

(47-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է (պայմանական) 1918 թ. համար՝

	Տարեկան	Կէս տարին	Ամսական
ՌՈՒՍԱՍՏԱՆ՝	40 ր.	22 ր.	4 ր.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ՝	60 ր.	40 ր.	8 ր.

Տարեկան և կէս տարվայ բաժինները մաս-մաս վճարել—ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ:

Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ 1917 Թ. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ

«Մշակի» գրասենեակը յատուկ խնդրում է հին բաժանորդներին 1918 թ. համար բաժանորդագրվելիս՝ փոխադրական բլանկի վրա կպցնել անպայման 1917 թ. տպագրված հին հասցէներ վրա ունեցած համարով, որով դիւրութիւն տրված կը լինի գրասենեակի տեխնիքական գործավարութեանը:

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով: Յայտարարութիւնների համար պէտք է վճարել՝ Կովկասում—առաջին երեսի վրա տողատեղին (պետիտ) 40 կ., վերջին երեսի վրա 30 կոպէկ; Կովկասից դուրս՝ I երեսի վրա 60 կ., վերջին երեսի վրա 40 կոպէկ:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 1 րուբլի:

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ. Редакція газеты „МШАКЪ.

Արտասահմանից՝ TIFLIS. Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԲՆԱՒ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ:

Նիկո Զոգրաբեան և Ալեքսանդր Մինասեան ՇԻՐՎԱՆԶԱԴԷ իրանց զաւակների հետ յայտնում են իրանց քրոջ ու մօրաքրոջ

Կատարինէ Զախարեան ԼԻՍԻՆԵԱՆԻ

մահվան մասին: Հոգեհանգիստը չորեքշաբթի 29-ին նոյեմբերի, երեկոյեան 7 ժամին (Матиновская, д. № 9). Յուղարկաւորութիւնը հինգշաբթի, 30-ին նոյեմբերի 11 ժ. առաւօտեան դէպի Վերայի գերեզմանատան եկեղեցի:

1435 2—1

Արտիստական Ընկերութեան Թատրոն

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հինգշաբթի, նոյեմբերի 30-ին 1917 թ.

Բարեկամ մասնակցութեամբ տ. ՎԱՐԴՈՒՀՈՒ, պ. պ. Գ. ՏԷՐ-ԴԱՒԻԹԵԱՆԻ, Յ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆԻ և Յ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ԱՐՇԱԿ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ

Բեմական գործուն. XXV-ամեակի առիթով

Կը ներկայացվի

ՊԵՊՕ

Կոմեդիա 3 արարուածով Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ

ՊԵՊՕՅԻ դերը կը կատարէ Ա. ՄԱՄԻԿՈՆԵԱՆԸ

Վ Ե Ր Ջ Ը

*** Օսկան Պետրովիչը դժոխքում ***

Կոմեդիա 1 արար. Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ

ՄԱՆՕՍ ԴԻՄՔԵՐ Կատակներ օրվայ չարիքի վրա

ՕՍԿԱՆ ՊԵՏՐՈՎԻՉԻ դերը կը կատարէ Ա. ՄԱՄԻԿՈՆԵԱՆԸ

Մասնակցում են. տ. տ. Արուս-Ոսկանեան, Զարէլ, Յասմիկ, Սեւումեան, Վարդուհի, պ. պ. Աւետեան, Ալիխանեան, Միրզոյեան, Մամիկոնեան, Յարութիւնեան, Տէր-Դաւիթեան, Տէր-Գրիգորեան, Սեւումեան և ուրիշներ:

Տոմսակները կարելի է ստանալ կասսայում

Սկիզբը ժամը ճիշդ 8-ին

Բեմադրիչ՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ

Օգնական բեմադրիչ՝ Աւետեան

Հայոց Դրամատիկ. Ընկ. Խորհուրդ

տպ. 1434 2—2

ԲԺԻՇԿ

ԱՆՏԻՕԽ

Ներքին հիւանդութիւններ, նաև սիֆիլիս, կոկորդի, քթի, և ականջի հիւանդութիւններ: Ընդունելութիւնը մ. օրերը առ. ժ. 11—12-ը և 5—7-ը երեկոյեան:

[illegible]

Բեհբուտովսկայա փող. № 26.

տպ. 1286 50—29

ԲԺԻՇԿ

Ա. Յ. ԵՐԻՑԵԱՆ

Ընդունում է վեներական, միզասեռական և մորթի հիւ.: Բուժում սիֆիլիսի 914-ով և 606-ով, ռենտգենեան լուսաւորում—էլեկտրականութեամբ և այլ միջոցներով:

Ընդունելութիւնը երեկ. ժ. 5—8-ը, բացի կիրակի օրերից:

Նիկոլայեւսկայա փ. № 52, երկրորդ յարկ.

տպ. 1259 100—34

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ

(I հատոր Ա—Ն)

կազմած, [illegible] 2380 էջ, 11,262 առանձին [illegible]

Գինն է [illegible]

Գաւառատանց և արտասահմանի համար 10 րուբլի:

Դիմել՝ Թիֆլիս, «Մշակի» խմբագրութեան Հ. Առաքելեանին:

Վերագիր վճարով ապրանք ամենեւին չէ ընդունվում:

ԲԺԻՇԿ

Վ. ԽԱՉԱՏՐԵԱՆՑ

Ներքին և ջղային հիւանդութիւններ: Հիւանդների համար անվճար քննութիւնները կատարվում են ՁՐԻԱՊԷՍ:

Ընդունելութիւնը եր. ժ. 5—7

Հասցէ՝ Вознесенск. ул. № 8.

տպ. 1311 100—24

[illegible]

[illegible]

Բարիաթինսկայա 13, տելէֆօն 4—21.

[illegible] (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) [illegible]

Ընդունելութիւն [illegible] 1—12 ժա.

Հիւանդանոցի բժիշկներ

Ա. Ա. Յարութիւնեան

Ե. Ե. Վեսելովզորով

Լ. Ա. Զակրժեվսկի

Ա. Ր. Ֆիշեր

Ռ. Գ. Շահպարոնեանց

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Վերադառնալով վերսկսեց ընդունելութիւնը վեներական, միզասեռական և կաշուի հիւանդութիւններ ունեցողներին ամէն օր, բացի կիրակի օրերից, ժամը 12—2-ը: Կանանց համար՝ ժ. 2—3-ը ցեր.:

Հասցէն՝ Սօլօլակ, Բէբուտովսկայա փող. № 33. Հեռախօս 11—75.

տպ. (ե. հ. շ.) 1395 10—8

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ս. Գ. ԿԼՕՆՁԵԱՆ

Պլոմբ լնելը՝ բժշկ., արհեստ. ատամներ, կարծր կաներ ոսկուց և պլատինից, ոսկեայ կամուրջներ կատարելագործված մեթօդով:

Ընդուն. ամէն օր, բացի կիրակի օրերից առ. 10—1 ժ., երեկ. 4—7 ժ.:

Лермонтовская ул., № 1. մուտքը պէրէուլօկից:

(ե. հ. կ.) տպ. 1086 0—48

ԲԺԻՇԿ

Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

Վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը Ականջի, քթի և կոկորդի հիւ.

Ամէն օր, բացի կիրակի

Առաւօտ. 1—1 ժ., երեկ. 6—7 ժ.

Հիւանդների թիւը սահմանափակված է:

Бебутовская ул. 26., երրորդ օրիորդաց գիմնազիայի կողքին:

(ե. հ. կ.) տպ. 1238. 50—20

ԿԱՅԱՆԱԼՈ՞Ւ Է ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԸ

Ժամանակաւոր կառավարութիւնը նշանակել էր Հիմնադիր Ժողովի բացումը նոյեմբերի 28-ին: Եւ եթէ նա չը տապալվէր բոլշեվիկների ձեռքով, հաւանական է որ այդ օրը տեղի ունենար նրա բացումը: Բայց այսօր հարց է ծագում, թէ արդեօք նա կայանալու է, կարող է կայանալ ներկայ պայմաններում:

Ամբողջ Ռուսաստանը 8 ամիսներից է վեր սպասում է Հիմնադիր Ժողովին իբրև այն միակ փրկչի, որ պէտք է հանէ նրան իր այժմեան սոսկալի անիշխանական, քայքայման դրութիւնից, սահմանէ երկրում կարգ, կանոն, հեղինակաւոր իշխանութիւն:

Եթէ Հիմնադիր Ժողովը կայանար, նա պէտք է կանգնած լինէր սոսկալի իրականութեան առաջ: Նա պէտք է տեսնէր նախկին մեծ, հզօր Ռուսաստանը ծուէն-ծուէն եղած, յօշոտված. նա պէտք է տեսնէր անտեսական, արդիւնաբերական անլուր քայքայումը: Այս 8 ամիսների ընթացքում Ռուսաստանում կազմվեցին բազմաթիւ հանրապետութիւններ. մեզ մօտ Անդրկովկասում ևս կազմվեց անկախ կառավարութիւն, որ տեղական թերթերից մէկը անուանում է Անդրկովկասի Հանրապետութիւն: Եւ ահա Հիմնադիր Ժողովը պէտք է միջոցներ որոնէր միութեան բերելու բոլոր այդ սեպարատ, անջատ կառավարութիւնները, հանրապետութիւնները և թոյլ չը տալու, որ Ռուսաստանը բաժան-բաժան լինի և վերածվի մի երրորդ աստիճանի պետութեան, ինչպէս վերածվել է այժմ, այն Ռուսաստանը, որ պարծենում էր, թէ աշխարհին տալու է սօցիալիստական կարգ և երկրագնդի վրա սահմանելու է դրախտ: Իսկ առայժմ նա իր մէջ սահմանել է դժոխք: Բացի դրանից՝ Հիմնադիր Ժողովը տեսնելու էր, որ շատ հարցեր, որոնք պէտք է լուծվէին իր ձեռքով—ինչպէս ագրարային հարցը, հաշտութիւն կնքելու հարցը, Ռուսաստանի ազգութիւններին ինքնավարութիւն, աւտօնօմիա տալու հարցը—արդէն լուծվել են անձեռնհաս և անիրաւասու խմբակցութիւնների կողմից:

Բայց և այնպէս, Հիմնադիր Ժողովը միակ հաստատութիւնն և իշխանութիւնն է, որ կարող է վերջ տալ Ռուսաստանի այժմեան անկեալ և սոսկալի դրութեան և լուծել բոլոր հարցերը:

Բայց արդեօք կը կարողանայ նա. ահա մի հարցմունք, որ տալիս է այսօր իրան ամէն մի քաղաքացի: Եւ մեծ երկիւղ կայ, որ նա չը կայանայ, իսկ եթէ կայանայ էլ, նա պէտք է լինի պարոդիա Հիմնադիր Ժողովի, որովհետև բոլշեվիկները, եթէ միայն իշխանութիւնը նրանց ձեռքում մնայ, կարող են քշել նրան, քշել [illegible] միւս իրանց հակառակորդ կուսակցութիւնների ներկայացուցիչներին, մանաւանդ կադէտներին, որոնք շատ տեղերում նշանաւոր աջողութիւն են գտել: Առ հասարակ կադէտների ձեռք բերած աջողութիւնը սաստիկ զայրացնում է ոչ միայն բոլշեւիկներին, այլ և մենշեւիկներին. և եթէ բոլշեւիկները որոշեն վռնդել Հիմնադիր Ժողովից կադէտ պատգամաւորներին, հաւանօրէն, մենշեւիկները, սոց.-յեղափոխականներն էլ օգնեն նրանց: Ոչ մի կասկած չը կայ այժմ, որ եթէ բոլշեւիկները գործ դրած չը լինէին ընտրութիւնների ժամանակ բռնութիւններ, ապօրինութիւններ, կեղծիքներ, ճիշդ այնպէս, ինչպէս մեզանում գործեցին և գործում են «դաշնակցականները» տէրրօրի, կեղծիքների օգնութեամբ, կադէտները կը բռնէին ընտրութիւնների ժամանակ ոչ թէ երկրորդ, այլ առաջին տեղը: Բայց և երկրորդ տեղում կադէտները առաջ են անցնում բոլշեւիկներին և մենշեւիկներին:

Սակայն մի րոպէ ընդունելով հանդերձ, որ Հիմնադիր Ժողովը կարող է կայանալ, պէտք է ի նկատի ունենալ և այն, որ դժուար թէ այդ ժողովը կարողանայ փրկել Ռուսաստանը և յեղափոխութեան նուաճումները: Թէ ինչու, այդ երկիւղը շատ լաւ բացատրված է այն առաջնորդող յօդուածի մէջ, որ տպված է կովկասեան զօրաբանակի պատգամաւորների երկրային խորհրդի օրգան «Голосъ» թերթի մէջ (28 նոյեմբ. № 137) և որը առաջ ենք բերում ստորև:

Հ. Ա.

ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԸ

(Թարգմ. «Голосъ» թերթից)

Եթէ նոյեմբերի 28-ին նոյն իսկ գումարվէր Հիմնադիր Ժողովը, մենք պէտք է դառնութեամբ ընդունենք, որ սպառնում է մեզ առանձնապէս սաստիկ վտանգ ոչ միայն Հիմնադիր Ժողովի բացման համար, այլ և յեղափոխութեան բոլոր նուաճումների համար:

Բոլշեւիկների ծայրայեղ ձախ թեւը, անիշխանա-կոմմունիստական [illegible] առաջնորդված, տալիս է մեզ բաւականաչափ հիմք դատելու մեր ապագայութեան բաղդի մասին: Պետրօգրադի և Մոսկվայի քաղաքային դումաների վիճակը, որոնք ընտրված են յեղափոխութեան ամենաթանկագին պարգևներից մէկով—ընդհանուր ընտրական իրաւունքով—Հիմ. Ժողովի ընտրութիւնները ղեկավարող հաստատութեան յանձնաժողովի ձերբակալութիւնը, լրագիրների փակումը՝ այդ ամենը ապացոյց է, որ դեմօկրատիայի այդ կուրացած մասի պարագլուխները պատրաստ են և ժողովրդի ինքնիշխան կամքի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԻ ՄԷՋ

Ճամբորդական Նօթեր

IV

Ծեծի օգուտը

Մեր գիւղերն ու գաւառական կենտրոններն ունեն թանգարանների արժանի բազմաթիւ տիպեր, որոնց ամենակողմանի նկարագրելու համար սակայն մարդ պէտք է ունենայ փոքր ինչ ազատ ժամանակ կամ գոնէ օրվայ հացի ապահովութիւն, որ գնայ նրանց տեսնի ու լսի:

Բայց մեղաւորին ով է տուել արքայութիւն:

Մեր գրական ազատաւորները հացի և աշխատանքի յարմարութեան համար ամփոփված են յաճախ օտար վայրերում և բնիկ ժողովրդի կեանքի մասին փայփայել իրանց մանկական յիշողութիւնները միայն... Բայց ես զգում եմ, որ այստեղ շեղվում եմ իմ նպատակից. աւելի լաւ է հնազանդվեմ հռչակաւոր գերմանացու հրամանին. «Նկարագրիր և մի խօսիր»:

... Օգտվելով գիւղում գտնվելուս կարճ միջոցից, ես երբեմն հետ գնում եմ հարևան գիւղը, հեռու-մօտիկ բարեկամների մօտ:

Օրն արեւոտ է, օդը մեղմ, ճամբէքն չոր. մենք գնում ենք ոտքով:

Մեր առջևից գնում է մի սայլ: Զոյգ եզները գլուխները օրօրով՝ ծոյլ ու դանդաղ առաջ են քաշում ճռացող սայլը: Մի րոպէ այդ սայլն իմ աչքում դառնում է սիմվօլը հայկական բոլոր գործերի՝ ծոյլ ու դանդաղ և անվերջ ճռինչով:

Սայլը քշում է մի փոքրիկ տղայ, որի գլխին կայ ռուսական մեծ սօմու չափ մի փափախ: Մի այդպիսի փափախ ունի իր գլխին և նրա եաւ նստած մարդը, որ հանդարտ, ծանր ու մեծ չիբուխ է քաշում: Տեսնելով որ մենք հետիոտն ենք, գիւղացին մեզ հրաւիրում է սայլն նստելու:

Շնորհակալութեամբ նստում ենք և զրոյցի բռնվում:

Նա մեզ պատմում է գիւղի ներկայ կարգերից, գիւղացի ջահելների «լրբութիւնից», թանկութիւնից և բոլոր ժամանակ հառաչանքով կրկնում է. «աշխարհը խառնը է եղել»:

Բանից պարզվում է, մեր հարևանը նախկին տանուտէր է, որին պաշտօնանկ են արել յեղափոխութեան առաջին օրերին:

Խօսելով, մենք վէճի ենք բռնվում ծեծի մասին. օգուտ է դա թէ վնաս: Մեր հիւրընկալը գտնում է, որ ծեծն այնքան էլ վնասակար բան չէ: Եւ իբրև հաստատութիւն իր ասածին, նա անում է հետևեալ պատմութիւնը, որն ես իսկութեամբ առաջ եմ բերում, ապաւինելով իմ [illegible] յիշողութեանը:

* * *

Ինչ ուզում էք ասէք, պարոն, ծեծը այնքան էլ վնասակար բան չէ, ինչ որ կարծում էք,—ասում էր նախկին տանուտէրը չիբուխը քաշելով:—Չեմ ասում թէ՝ ծեծը բոլորովին օգտակար է: Չէ, ես էդ բանը չեմ ասում, քանի որ ծեծը ունի իր վնասներն էլ. օրինակ, երբ [illegible] վեր ունես ու ճիշդ անտեղի եկար թակես, նա, ի հարկէ, պարզ բան է, կը վնասի. կամ ձեռը կը կոտրի կամ ոտը, կամ գլխին ցաւ կը տայ կամ մէջքին... Բայց երբ ծեծում ես էնպէս, քաղաքավարի կերպով, խրատելու կամ բան իմանալու համար, դա էլ, ի հարկէ, զուր չի, իրա օգուտն ունի:

Հիմի կասէք՝ էդ ինչ:

Այ թէ ինչպէս:

Մի անգամ, աղայք որ դուք էք, մեր գեղացիներից մինը, [illegible], գնում է իրա հարևանի [illegible] [illegible] են ասում, նրա գարմանը [illegible]: [illegible] Գիտօն [illegible] է գարմանը [illegible]: Ասում է՝ էս տեղ մի բան կայ. անպատ-

ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ԴԱՀԼԻՃ—կիրակի, դեկտեմբերի 3-ին—ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ
(Երաժշտական դպրոց) (Գրիբոյեդովսկայա փող.)

Մ. ՄԱՏԻՆՃԵԱՆԸ

Դասախօսելու է ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՃԱՐԵՂ ՎԻՊԳԻՍԱՆ
ԳԻ ԴԸ-ՄՕՊԱՍԱՆԻ
ՄԱՍԻՆ

ՍԿԻԶԲԸ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 8 և ԿԷՍԻՆ
ՏԵՂԵՐԻ ԳԻՆԸ՝ 50 Կ. ՄԻՆՉԵՒ 3 ՌՈՒԲ.
Տոմսակները վաճառվում են Ե. ՑԱՏՈՒՐԵԱՆԻ խանութում (Դվորցովայա փող.) և ԳԻՐ գրախանութում։

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ «Գրական-Գեղարուեստական ԱԼՄԱՆԱԽԻ» 3—4 գիրքը։
Թիֆլիսի բաժանորդներն իրանց գրքերը կարող են ստանալ Կոնսերվատորիայում՝ դասախօսութեան օրը։
տռ. (2) 1436 2—1

ԹԻՖԼԻՍԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԵԱՆ

Երկաթուղային մթերամատակարարման կազմալուծումը, որ առաջ է եկել Հիւսիսային Կովկասում տեղի ունեցած բարդութիւններից, զրկել է հասարակական կազմակերպութիւնների պարենային ապրանքները ժամանակին ստանալու հաւատից, հետևաբար և մնում է մաքսիմալ խնայողութիւն կատարել ձեռքի տակ եղած պաշարը ծախսելու վերաբերմամբ։

Ամեն մի րօպէ Անդրկովկասը կարող է կտրվել Հիւսիսային Կովկասից, Անդրկովկասին սնունդ մատակարարող միակ աղբիւրից։

Ձեռք են առնվում ամենաեռանդուն միջոցներ ազգաբնակութեանը պարէնի կողմից ապահովելու վերաբերմամբ։ Սակայն պարենաւորիչ կազմակերպութիւնները առ այժմ ստիպված են ալիւրի եղած պաշարի սպառումը կրճատել մինչև մինիմում, որպէսզի կարելի լինի մի կերպ տանել այս ծանր ժամանակաշրջանը։

Համաձայն Քաղաքային Դումայի և պարենաւորիչ կազմակերպութիւնների որոշման, նոյեմբերի 29-ից սկսած, մինչև որ դրութիւնը կը բարւոքվի, ազգաբնակութեան իւրաքանչիւր հոգուն կը տրվի $^3/_8$ ֆ. հաց և $^1/_4$ ֆ. պաքսիմատ (սուխարի, որի ֆունտը գնահատվում է 32 կոպ.)։

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ,

Քաղաքային Դուման և Պարենաւորիչ Կազմակերպութիւնները կոչ են անում ձեզ անդորրութեամբ հանդիպել և այդ նոր ու ծանր փորձութեան և այդպիսով կատարել քաղաքացու յեղափոխական պարտքը։

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ՊԱՐԵՆԱՒՈՐԻՉ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

տռ. 1437 1—1

դէմ ի դէմս նրա ընտրեալների։ Որքան և ցաւալի է այդ ամեն մէկի համար, որ փոքր ի շատէ յարգում է ժողովրդի այդ կամքը, նա պէտք է ասէ. «Այո, նրանք դաւադրութիւն սարքելու են և այդ կամքի դէմ։ Ռուսաստանի բոլոր ազգութիւնների համար այդ նուիրական օրը մենք պէտք է ասենք բոլշևիկներին, որ եթէ ինքնակալութիւնը, յենվելով հասարակութեան մարդկային կեղտարանքը կորցրած հասարակական տականքների վրա և սուինների ուժի վրա՝ կործանվեց, այդ միայն նրա համար, որ նա յենվել էր սուինների ուժի վրա, մի ուժի, որ ատելի էր սօցիալիստներից ղեկավարված մասսաների արթնացած գիտակցութեան համար։ Իր զէնքով ինքնակալութիւնը կործանեց իրան։ Եւ մենք ամենքս հրճվեցինք։ Բայց եթէ այդ ատելութիւնը դէպի սուինի ուժը, որով գործում է յեղափոխական դեմօկրատիայի մի մասը, երեւան գայ ամբողջ դեմօկրատիայի մէջ, այն ժամանակ մենք հրճվել չենք կարող, որովհետև այդ ատելութեան մէջ կոչնչանայ այն ամենը, ինչ որ մենք այժմ ունենք, այն ամենը, որին ձգտում ենք։

Պրոլետարիատը և աշխատաւոր գիւղացիութիւնն իրանց սեփական արեան մէջ կը մխրճեն ազատութեան դրօշակը։ Թուլացած եղբայրասպան կռւով, նրանք կընկնեն. և ահա այն ժամանակ առաջ կը գայ ռէակցիան. բոլոր հակայեղափոխականները դուրս կը գան իրանց որջերից և, շլացած՝ բուրժուազիայի ոսկիներով, վերջ կը տան մաշված դեմօկրատիային։ Դա կը լինի պատմական րօպէ, բայց ցաւալի և վշտալի։

Սակայն մենք չենք հաւատում դրան. մենք հաւատ ունենք դեմօկրատիայի խելքին. Վերջապէս, պէտք է հասկանան բոլշևիկները և նրանց ետևից գնացող զինւորների, բանւորների և գիւղացիների մի մասը, թէ կռիւը մղվում է ոչ թէ ինքնակալութեան դէմ, ոչ թէ բուրժուազիայի դէմ, այլ դեմօկրատիայի մի այլ մասի դէմ։

ՀԱՄԵՍՏ ՅՈԲԵԼԵԱՐԸ

Իսկապէս համեստ, բայց շնորհալի բեմական գործի[illegible], ընդունակ, գաղափարական աշխատո[illegible] դերասանական ասպարէզում։

Ոչ [illegible], բայց իր բեմական [illegible]ութիւններով [illegible] նախանձախնդիր մայրենի բեմի առաջադիմութեանը։

Արշակ Մամիկոնեանն է դա, որի անունը կապված է եղել հայ և ռուս դերասանական խմբերի հետ։

Ու այդ դերասանական գերդաստանների մէջ Մամիկոնեանը գրաւել է միշտ իր ուրոյն տեղը։ Միշտանեկան երեւոյթ չէ վրիպել մեր աչքից. ընթացս 15 տարիների Մամիկոնեանը երբէք չէ փչացրել իր ստանձնած դերերը։

Ճիշդ է, մեծ դերերի մէջ հանդէս չէ եկել նա, բայց փոքրիկ, գլխաւորապէս կոմիքական դերերում Մամիկոնեան եղել է միշտ բարեխիղճ, միշտ պատուով է դուրս եկել իր պարտականութիւնից, միշտ էլ գոհացրել է հասարակութեանը։

Խոշոր բեկումներով չէ զարդարվել Մամիկոնեանի անունը, սակայն ով մի անգամ տեսել է նրա խաղը, նա անշուշտ կասէ բեմական այդ համեստ գործչի հասցէին՝ Մամիկոնեան բարեխիղճ ու շնորհալի դերասան է։

Եւ ահա, աննկատելի կերպով գլորվել են 25 տարիներ, որոնց ընթացքում Մամիկոնեան իր ույժերի չափով ստատարեց մայրենի բեմին, որ առանց այն էլ աղքատ է ջանասէր ու անձնուէր սպասաւորներից։ Եւ այսօր յարգանքի ու շնորհակալութեան ըզգացմունքով մենք արձանագրում ենք Արշակ Մամիկոնեանի համեստ գործունէութիւնը բեմական ասպարէզում։

Մի բան [illegible]ում է ինձ. Մամիկոնեան իր [illegible] տարիները հայ բեմից չի աշխատում։ Բեմը նրա սիրտ դաւակն է, որին նուիրած է իր ուժերի մի մասը։ Գուցէ և այդ պատճառը, որ Մամիկոնեանը նման չէ այլ քաղցած դերասանին…

Մամիկոնեանը առոյգ է, կենսուրախ ու տակաւին պատմէ պէս պատրաստ՝ իր եռանդուն մասնակցութիւնը շարունակել մանաւանդ հայրենի սպասաւորելու գործում։

Այսօր, նրա գիտատանքի յաղթանակի օրը, ես ամբողջ սրտով ցանկանում եմ, որ Մամիկոնեանը հայ նոյնպէս ժիր, նոյնպէս կենսուրախ, նոյնպէս կայտառ, ինչպէս եղել է մինչև օր, և իր շնորհալի մասնակցութեամբ հայկական ներկայացումներին՝ դէպի ինքը միշտ վառ պահի հայ թատրոնը սիրող ու յարգող հասարակութեան ջերմ վերաբերմունքն ու համակրութիւնը։

Մեր այժմեա յոխուռն, ալեկոծ ու խառն օրերում՝ համեստ Մամիկոնեան, թւում է, ուրիշ վարձատրութիւն չի կամենայ հայ հասարակութիւնից, բայց եթէ այն, որ այսօր այդ հասարակութիւնը ցոյց տայ Արտիստիկ Ընկ. Թատրոնը և գոնէ այդպիսով իր անկեղծ ու ջերմ համակրութիւնն արտայայտէ մի համեստ ու շնորհալի վաստակաւորի։

Արշակ Մամիկոնեան ըստ ամենայնի իրաւունք ունի գոնէ այդօրինակ ջերմ վերաբերմունքի այսօրվայ հանդէսին։

Ռեցէնզէնտ

ԴԱՐՁԵԱ՞Լ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մենք ստացանք հետևեալ գրութիւնը, որ անփոփոխ առաջ ենք բերում.

«Հայ Յեղափոխական Դաշնակցութեան վերջին ռայօնական համագումարը որոշեց դիմել ընկերներին գործելու Թիւրքաց Հայաստանի գեներալ-կոմիսարիատում, որպէսզի իրենք վերականգնեն այն գործը, որ կենտրոնացած է այդ հիմնարկութիւնում, առավել եռանդուն կերպով և լրջութեամբ։

«Անհրաժեշտ են աշխատակիցներ, ինչպէս վարչական գործում գաւառական կոմիսարներ, շրջանային և նրանց օգնականներ, այնպէս և մասնագէտներ՝ բժիշկներ, դեղագործներ, ֆէլդշերներ, ֆէլդշերուհիներ, մանկաբարձուհիներ, [illegible]նասնաբոյժ ֆէլդշերներ, արուեստագէտներ (տեխնիկներ), գիւղատնտեսներ, վերահսկիչ գիւղատնտեսներ և այլն։

«Պայմանների մասին դիմել՝ անձնական գրասենեակ բժ. Զաւրեանի, օգնական գեներալ կոմիսարի, գրասենեակի քարտուղար՝ Ա. Բաբխուդարեանին, Թիֆլիս, Փողոց Մեծ Պետրոսի № 20»։

Տպելով այս նամակը, մենք չենք կարող չարտայայտել մեր տարակուսանքը և զարմանքը։ Թիւրքաց Հայաստանի ընդհանուր կոմիսարիատը՝ մի կուսակցական (դաշնակցական) հաստատութիւն չէ, այլ պետական։ Հետևաբար կապել կոչը Հայաստան գնալու և աշխատելու մասին Դաշնակցութեան կուսակցութեան հետ և անկորեկտութիւն է և անթոյլատրելի։ Չէ որ միայն դաշնակցականների մենաշնորհն չէ Հայաստան գնալը. ամեն մի հայ որ կամենայ աշխատել, իրաւունք ունի գնալ Հայաստան, իսկ քարտուղար Բաբխուդարեանը, եթէ ինքը լինելով դաշնակցական, կամենում է այդ գործը անպատճառ կապել Դաշնակցութեան հետ։ Նա ուրեմն ուղիղ չէ ըմբռնում իր պարտականութիւնները և դժուար թէ կոմիսար բժ. Զաւրեւը համաձայն լինի իր քարտուղարի գործակերպին։ Ընդհանուր կոմիսարիատը եթէ գտնում է, որ Հայաստանի վերականգնման գործը պահանջում է աշխատակցութիւն բոլոր հայ կենդանի ուժերի, պէտք է իր կոչը չը դնի կուսակցական հողի վրա, այլ ընդհանուր-ազգային։ Չէ որ կան մարդիկ, որոնք այն կարծիքի են—և ըստ մեզ շատ արդարացի—որ Հայաստանի տունը քանդողը, նրան կործանողները եղել են և են դաշնակցականները. և ուրեմն ինչպէս կարող են այդպէս մտածողները գնալ աշխատել դաշնակցականների կոչով։

Յոյս ունենք, որ կոմիսարիատը կուղղի իր պարտականութիւնները սխալ ըմբռնող և իր չափն գործ դնող քարտուղարի սխալը։

„ՄՇԱԿԻ"
ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

(Ուղղված Միք. Պապաջանեանին)

Նոր-Բայազէտ, 23 նոյեմբերի

Հայ Ժողովրդական Կուսակցութեան տեղական ֆրակցիան ունեցաւ արտակարգ նիստ իշխանութիւնից ձեր հեռանալու առիթով, միաձայն բանաձև ընդունեց, թէ լինելով Անդրկովկասեան Յատուկ Կոմիտէի անդամ՝ յընթացս ութ ամիսների՝ դուք գործադրում էիք Կովկասի ժողովուրդների կեանքում դեմօկրատական սկզբունքներ, ամեն կերպ նպաստելով նրանց միջև եղբայրական յարաբերութիւններ պահպանելուն։

Ցանձին ձեր՝ փախստականները միշտ ունէին պաշտպան իրանց իրաւունքների և կարիքների։ Դուք գնահատված էք գիտակից հայերի կողմից։

Պատմութիւնը ձեզ չի մոռանայ։

Շնորհիւ Անդրկ. Յատուկ Կոմիտէի գործունէութեան, տարբեր ցեղերով բնակված Կովկասը, միշտ մոռացված կենտրոնից, այժմ իր հանգստութեամբ յորդորում է Ռուսաստանի միացած ժողովուրդներին պաշտպանել յեղափոխութիւնը, և ոչ թէ վարել քաղաքացիական կռիւ։

Շնորհակալութիւն ենք յայտնում այդօրինակ արդիւնաւէտ գործունէութեան համար։ Ցանկանում ենք տեսնել ձեզ ապագայում ևս նաև պատասխանատու պաշտօններում։

Նախագահ [illegible]

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ.

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՊԱՀԱՆՋԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ

Մօսկվայից հեռագրում են, որ կայանից ստացվել է հեռագիր, թէ գերմանացիք նայում են Ռուսաստանի վրա իբրև պարտված երկրի վրա, պահանջում են արտահանել 15 տարիների ընթացքում Գերմանիա հում նիւթերը և սահմանել Ռուսաստանի կառավարական հաստատութիւնների մէջ գերմանական կոմիսարների պաշտօններ։ Մերձբալտիկեան երկիրը և Ռիգան անցնում են Գերմանիային։ Գերմանացիք պահանջել են դուրս հանել այդ երկրից բոլոր ռուս զօրքերին։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՐՑԸ

Ստոյգ աղբիւրներից հաղորդում են, թէ վերջին ժամանակ շահագրգռված պետութիւնների միջև տեղի էին ունենում բանակցութիւններ, որոնց նպատակն էր հող պատրաստել կենտրոնական պետութիւնների և արևմտեան մեր դաշնակիցների միջև համաձայնութիւն կայացնելու հնարաւորութեան վերաբերմամբ։ Ռուսաստանը պէտք է բաժանվի տնտեսական տեսակէտից Անգլիայի, Գերմանիայի և Ֆրանսիայի միջև, իսկ համապատասխան բանկերը պէտք է իրաւունք ստանան շահագործել Ռուսաստանը։ Գերմանիան պէտք է ստանայ տնտեսակ. գերակշռութիւն Հարավ. Ռուսաստանում և Դօնի աւազանում։ Ֆրանսիան ստանում է մերձվոլգեան շրջանները, իսկ Անգլիան՝ ամբողջ Հիւսիսային Ռուսաստանը և Կովկասը։

ՇԱՀՍԵՎԱՆՆԵՐԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ

Բելասուվարից հեռագրում են.

Շահսէվանների մեծ խմբերը անցել են ռուսական սահմանը Բելասուվարի ուղղութեամբ, չը խնայելով ոչինչ իրանց ճանապարհին. ոչնչացնում են ցանքերը, ոչնչացնում են ջրանցքները, կողոպտում են ազգաբնակութիւնը։ Սահմանը փակ է։ Շահսէվանները Պարսկաստան են տանում կողոպտված անասուն։

Շահսէվաններին արտաքսելու համար անհրաժեշտ է խոշոր ույժ հեծելազօրով և հետեւակ զօրագնդերով։ Եթէ օգնութիւնը ուշանայ, հետևանքները սարսափելի կը լինեն։ Կարող է սկսվել ամբողջ ազգաբնակութեան [illegible]։ Բելասուվարի հարեան գաւառում երկու օր է կատաղի կռիւ է զօրքերի և տեղական բնակիչների միջև։

Լենկօրանի և Ջեվատի գաւառների զօր[illegible] բերդային վտանգի։

ՆՈՐԱԳՈՅՆ ԼՈՒՐԵՐ

✖ Բոլշևիկները թագցնում են զինադադարի պայմանները։ Իր զեկուցման գաղտնի մասում Կամենևը ասում, որ գերմանացիները անջատ հաշտութեան պայման են դնում, որ ռուսական զօրաճակատը ետ քաշվի մինչև Ֆինական ծոցի արեւելեան մասը և գերմանացիների առաջ բացվի Բոտնիքեան ծովածոցը։

✖ «Темная Ночь» (մութ գիշեր) թերթը, որ փոխարինում է «День»-ին (օր), հաղորդում է, որ գերմանացիները պահանջել են Պետրոգրադը, որի համար նրանք ապա[illegible]

[illegible]

ճառ գողացել են։ Դեռ-դէն. Երբ (Պետօն) գտնում է։ Գտնում է ու գնում էգ Մաթոսի դռանը կանգնում։

— Մաթոս,—ասում է,—հօ ինձանից դարման չես տարել։

— Չէ,—ասում է,—Աստուած վկայ. տանում եմ գլխիս ամեն։

Պետօն ասում է.

— Ձեր երդում մի ուտիլ, թէ տարել ես՝ ասա. ինչ կայ որ, հարեան մարդ ենք. ըլի որ մի երկու կթոց էլ հարկաւորված ըլի, տանես։

Մաթոսը նորից երդում կրակն է ընկնում, թէ՝ չէ, էն առէք-կրէքը վկայ, ես բանից խաբար չեմ։

Էդտեղ Պետօն բարկանում է.

— Բա սրան ինչ կասես,—ասում—է, որ Իգը քու դուռն է գալի։

—Ա՛յ մարդ, դու ասի շնի ես,—ասում է Մաթոսը.—ով գիտի գիշերը թարս ես քշել։

Էստեղ նրանց կռիւը իրար է հասնում. Նա նրան զըռ, նա նրան՝ հէյրն ու մէր։ Բիչ է մնում իրար տան։ Հարևանները չեն թողնում, կռիւը մէջ է ընկնում։

Էգ ժամանակն էլ ես տանուտէր էի Պե[illegible]

կտրվում. Տղերքի խելքն էնքան չի կտրել, որ դաղտնիքն անելուց ետը ինչ էլ է կորցնի։ Մարդ դրկեցի էգ Մաթոսին կանչելու։

Եկաւ։

— Մաթոս,—ասում եմ,—Պետօյից դարման ես տարե՞լ

— Չէ,—ասում է,—դարմանն ինչիս է պէտք։ Ես դարման չունեմ։

—Այ տղայ, ասում եմ,—Իգը քու դուռն է գալի, ուրանալ մի։

— Շատ էլ գալիս է,—ասում է.—ուզում էք մարագս մորիկ արէք։

Մտնում ենք մարագը։ Դարմանը դարմանից ձոց ջոկես։ Ինքը Քրիստոս էլ գայ բան չի հասկանայ։ Գոմն ենք մտնում. էլի էնպէս. տաւարը դարման է ուտում, ինչ իմանաս թէ ում դարմանն է. իրանն՞ էր, թէ ուրիշի։

— Դէ, Մաթոս,—ասում եմ,—տասանց ղալմաղալի խոստովանիր, որ դարմանը դու ես տարել. Իգը քու դուռն է գալիս։ Եթէ դու էլ չես տարել, մին է, գողութիւնը քու տունն է մտել։

Նա՞ չէ որ չէ։

[illegible]

Իրիկունը նորից հարց ու փորձ արի։ Էլի մէջը չառաւ. ո սարումը բան կայ, էն քարումը կայ, ինձ ձանում բան չը կայ։

Տղաներին ասի.

—Դէ որ էդպէս է, դրան մի քանի տուէք։

Տուրին։ Էլի չը խոստովանեց։

— Մին էլ տուէք,—ասի։

Ես անգամ երկուսով վրա եկան, որ աչքը վախացնեն։ Էլի քարի պէս պապանձվել է, ձէն չի հանում։

— Աղա,—ասում եմ,—այ գլխամեռ, խոստովանիր ու պրծի էլի։

Ո՞ւմ ես ասում։ Թէ էս փէջն իրանով է տալի (նա ձեռքը խփում է սալի թարին), նա էլ էնպէս։

— Դէ, որ խոստովանում չես,—ասի,—նորից տարէք դրան փակեցէք։

Էսպէս մի էր ու գիշեր էլ դրան պահեցինք։ Էգօր իրիկունը նորից կանչեցի։

— Մաթոս,—ասում եմ,—վերջին անգամն եմ ասում. խոստովանում ես՝ խոստովանիր, խոստովանում չես՝ սուտը գանգատ կանեմ, ինքս էլ վկայութիւն կը տամ, որ դարմանը դու ես տարել, քանի որ Իգը քու դուռն էր գալի։

[illegible]

տուէք, որ էգպէս իրան տանի է։

Հիմի ինչ էք կարծիք, պարոն, ծեծն օգնեց տուեց, թէ չէ... Ի հարկէ, օգնեց,—աւելացրեց գիւղացին հանգած չիբուխը վառելով։—Հէնց որ տղաները թեկունքը դաղեցին, դա գոռաց.

— Բօլ ա,—ասում է,—ձեզ մատաղ, ես եմ տարել. բօլ ա, էլ տալ մէջք, ես եմ տարել...

— Դէ էտենց,—ասում եմ,—թեզ ասէիր պրծնէիր. էլ ինչի՞ համար ես դուր տեղը մեզ չարչարում...

Ու էսպէս ամեն բան իմացայ. իմացայ թէ ինչ ժամանակ է գնացել դարմանը գողանալու, ինչքան է գողացել ու որտեղ է պահել... Ու հիմի ասում էք թէ՝ ծեծը սկի օգուտ չունի։

Ա՛յ, ձեզ օրինակ։

Հա, էս էլ ասեմ, որ ամեն բան իմանալուց ետը, դրան նորից փակեցինք, որ առաւօտը բաց թողնենք։ Բայց էդ գիշերը սարսաղը վախից վեր է ընկնում մեռնում։ Դու մի ասի՝ էնպէս է կարծում, թէ գործը սուդը պէտի տանք, որ իրան Սիբիր ղըրկենք։

Սարսափ մարդ։ [illegible]

Ստ. Զորեան

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՅԵՏԱՁԳՎԱԾ Է ԴԵԿՏ. 20-ԻՆ

Ինչպէս երէկ հաղորդեցինք, կենտրոնական կոմիտէն ամսիս 27-ի նիստում քննութեան առնելով ժամենտի դրութիւնը և տեղափոխութեան դժուարութիւնները՝ որոշել էր կուսակցութեան երկրորդ համագումարը, որ նշանակված էր դեկտեմբերի 6-ին, յետաձգել 2 շաբաթով և նշանակել դեկտեմբերի 20-ին։ Միևնոյն ժամանակ կոմիտէն կարևոր էր համարել, որ ճիւղերը հէնց իրանց տեղերից ուղարկեն պատգամաւորներ, այլ ոչ թէ Թիֆլիսում ապրող կուսակցութեան անդամներից նշանակեն։

Կենտր. կոմիտէի այս որոշումը երէկ կուսակցութեան բոլոր ճիւղերին հաղորդվեց, Անդրկովկասի մօտիկ տեղերին ապահոված նամակով, իսկ հեռաւոր տեղերին, ինչպէս նաև Անդրկովկասից դուրս գտնված ճիւղերին, հեռագրով։

Եթէ որևէ տեղ նամակը կամ հեռագիրը ուշ հասնի կամ չը հասնի, մեր ճիւղերը թող ի նկատի առնեն ներկայ յայտարարութիւնն և ըստ այնմ վարվեն։ Համագումարի զբաղմունքի օրակարգը մնում է նոյնը։ Ցանկալի է, որ եկող պատգամաւորները իրանց հետ բերեն ճիւղերի ընդհանուր ժողովների որոշումները օրակարգում դրված հարցերի մասին։

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԳԱՒԱՌՈՒՄ

Կենտ. կոմիտէի նոյեմ. 28-ի նիստում զեկուցումներ տուին՝ ընտրութիւնների գործով գաւառները գնացած կուսակցութեան ներկայացուցիչները՝ Ստ. Մալխասեանց, Յովհ. Ստեփանեան և Եր. Յարութիւնեան։ Կենտ. կոմիտէն որոշեց՝ այդ զեկուցումները հետզհետէ հրատարակել Տեղեկատուի մէջ, միևնոյն ժամանակ ընտրեց մի մասնաժողով, որ պէտք է խմբագրէ [illegible] անկանոնութիւններն ու զեղծումները, որ կատարվել են ընտրութիւնների ժամանակ, անդրադարձն քայլեր անելու համար։ Մասնաժողովի անդամներ ընտրվեցին Լ. Դանիէլեան, Եր. Յարութիւնեան, Յովհ. Ստեփանեան և Յակ. Տէր-Յարութիւնեան։

Վաղվանից կը սկսենք տպագրել զեկուցումները հետզհետէ։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍԵՊԱՐԱՏ ԶԻՆԱԴԱԴԱՐԸ

«Մշակի» 252-դ և 253-դ համարների առաջնորդողներում մանրամասն գրված է այն բօլշևիկեան քայլի մասին, որ արել է հակաբօլշևիկեան Անդրկովկասեան Կոմիսարիատը, զինադադար անելով ռուս թիւրքական ֆրօնտում՝ սեպարատ հաշտութիւն կնքելու համար, և Կոմիսարիատի դաշնակցական անդամների՝ այդ ակտը ստորագրելու մասին, որ կարող է աղէտաբեր լինել հայկական դատի համար։

Դաշնակցական երկու կոմիսարների այդ գործողութեանը մի յօդուած է նուիրել և Իւ. Սեմենովը, Ժող. Ազատութեան Կուսակցութեան օրգան «Народная Свабода» թերթի 138-րդ համարում (Նոյեմբ. 28-ից) «Կառավարական դաշնակցականներ» վերնագրով, որը տալիս ենք այստեղ թարգմանութեամբ։

«Դաշնակցութիւնը միշտ եղել է յեղափոխական կառավարութիւն. այժմ նա դարձել է կառավարական։ Այս ասպարէզում նա հէնց իր առաջին քայլերից ցոյց տուեց իր պետական խելահասութիւնը, լենինական ոգով սեպարատ զինադադար կնքելով թիւրքաց բանակի մի մասի հետ, խախտելով դաշնակիցների հետ կապված դաշնագիրը։ Իմ հարցին, թէ ինչպէս կարելի է հաշտեցնել այդ դաւաճանական գործողութիւնը նրանց նախկին յարաբերութեան հետ դէպի Ֆրանսիան, Անգլիան և Ամերիկան, ինձ միանգամից պատասխանեցին երկու կառավարական կիսապաշտօնական օրգաններ, սօց.-յեղափ. «Знамя Труда»-ն և դաշնակցական «Հօրիզոնը»։ Սօց. յեղափոխականներն ասում են, թէ Կոմիսարիատն ի նկատի է առել դաշնակիցների շահերը, պայման դնելով այս «պահանջը», որ զինադադարը չը ծառայէ ի վնաս դաշնակիցների։ Իսկ «Հօրիզոնը» գրում է.

«Որ ժամանակից ի վեր պ. Սեմենովը այնքան խորախօսել է, որ ցանկանում է պատերազմ մղել՝ մինչդեռ իրաւես մենք այլ ևս չունենք ռազմաճակատ, երբ զինուորը լքում է դիրքերը, երբ զօրքը չունի ոչ կերակուր, ոչ զգեստ և ոչ ռազմամթերք։ Այսպիսի պայմաններում քաջարի կադետներն անգամ չեն կարողանայ պատերազմել, ուր մնաց թէ մենք»։

Միևնոյն կառավարութեան երկու կիսապաշտօնական օրգաններն ասում են այնպիսի բաներ, որոնցից մէկը միւսին ջրում, ոչնչացնում է։ Մէկը ասում է, թէ մենք «պահանջներ» ենք դնում, ուրեմն որ մենք ունենք ինչ-որ ուժ՝ մեր պահանջը իրագործել տալու համար, իսկ միւսը միևնոյն օրը բարեհաջող յայտարարում է, թէ մենք ոչ մի ուժ չունենք։ Եթէ իրականութիւնը այնքան տխրալի է, ինչպէս նկարագրում է կառավարական «Հօրիզոնը», այս դէպքում մեր զինադադարը ոչ թէ կռուող զինադադար է այս կամ այն պայմաններով ու պահանջներով, այլ պարզապէս անձնատուր լինելու պայմանագիր։ Սակայն «Հօրիզոնը» ասում է. «Դաշնակցական կոմիտէն կարծում է, թէ գործակցելով մենշևիկների և սօց.-յեղափոխականների՝ իրանք ամենևին չեն հրաժարվում հայկական հարցի միջազգային լուծումը ձեռնարկելուց և չեն կտրում յարաբերութիւնները Ֆրանսիայի, Անգլիայի և Ամերիկայի հետ»։ Բայց ներկայ դէպքում եթէ իրօք մենք ընկած էինք այն ծայրայեղ վիճակի մէջ, որ նկարագրում է «Հօրիզոնը», այս մասին պէտք էր խօսել ոչ թէ թիւրք զինուորի հետ, առանց անելով դաշնակիցներին, այլ հէնց դաշնակիցների հետ, նրանց հետ խորհրդակցելով միջոցներ ձեռք առնել և տալ թէ խօսել թիւրքերի հետ՝ ամբողջ դաշնակից կոալիցիայի [illegible] և ոչ թէ սեպարատ կերպով։ Ինչպէս այդ արեց Դաշնակցութիւնը՝ պայմանում նստած իր ընկերների հետ միասին։ Դուք ասում էք, թէ չենք խզում կապը Ֆրանսիայի, Անգլիայի և Ամերիկայի հետ։ Բայց ձեզ պէտք է յայտնի լինի այս պետութիւնների այն տեսակէտը, որ նրանք յայտարարեցին նոյեմբ. 10-ին գեներալ Դուխոնինին տուած հաղորդագրութեան մէջ, թէ «Ռուսաստանի կողմից որևէ խախտում Լոնդոնի դաշնագրի՝ կունենայ ամենածանր հետևանքներ»։ Իսկ ձեր կարծիքով ինչ է ձեր արածը, եթէ ոչ յարաբերութիւնների խզում դաշնակիցների հետ։ Չէ՞ որ Լոնդոնի պայմանագիրը խօսում է հէնց սեպարատ հաշտութեան և սեպարատ զինադադար չը կնքելու մասին։ Իսկ դուք սեպարատ զինադադար կնքեցիք։ Այս բաւական չէ։ Սեպարատ զինադադար կնքելուց յետոյ միայն դուք հաղորդում էք այս մասին ի տեղեկութիւն դաշնակիցների, սիրալիր կերպով յիշատակելով և այն «պայմանների» մասին, որ իբր թէ դուք առաջարկել էք թիւրքերին, որ ձեզանից ոչ մէկը ոչ մի զօր չէ առաջարկել և իսկոյն յայտարարում էք կիսապաշտօնական մերձեցում, թէ դուք չունէք ոչ զօրամաս և ոչ որևէ նշոյլ զինուորական ուժի։ Այս ինչ է խաբէութիւն—յանդուգն ծաղր թէ ապիկար անհասկացողութիւն ձեր վարմունքի։

Թէ մէկ և թէ միւս դէպքում հարկ կը լինի ասածել «ամենածանր հետևանքների մասին»։

Սրա մէջ է գործի էութիւնը և ոչ թէ կադետների ռազմիկութեան մէջ։ Մենք միշտ կանգնած ենք եղել դաշնակիցների հետ համերաշխ գործելու և դաշնակիցներին հաւատարիմ մնալու հողի վրա։

Հ. Ժ. Կ. Խմբագ. Մասնաժողով

3-ին. կոնսերվատորիայի դահլիճում Մ. Մ[illegible]եանը խօսելու է «Ֆրանսիայի հանճարեղ փիլիսոփայ Ժիւյօ-Մօդրասան» նիւթի մասին։

※ Վրիպակ.—«Մշակի» երէկվայ №-ում լրաբերի բաժնում տպվել է, թէ լրատուութեան կոմիսար Խանխօյեանն հրաժարվել է իր պարտականութիւններից, մինչդեռ պիտի լինէր՝ ստանձնել է իր պարտականութիւնները։

ՎՐԱՑ ԿԵԱՆՔ

ՎՐԱՑ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

III

Վարչական սեկցիայի բանաձևը

Վրացական առաջին ազգային համագումարը ուշադրութեան առնելով՝

1) Թէ վարչական (ադմինիստրատիվ) ինքնակառավարութիւնը և վարչական ու դատական ֆունկցիաների միացումը արմատապէս հակասում է մարդու և քաղաքացու տարրական իրաւունքներին,

2) Թէ լաւագոյն հանրապետական նորմաները չեն հասնի իրանց նպատակին, եթէ բացակայում են համապատասխան գործադիր մարմիններ,

3) Թէ միմիայն ժողովրդի միջից դուրս եկած և նրա հսկողութեան տակ եղած վարչութիւնը կարող է պաշտպանել հանրապետութեան օրէնքները, որոշեց՝

1) Միլիցիան պէտք է ամբողջովին գտնվի տեղական ինքնավարութեան մարմինների կարգադրութեան ներքոյ։ Նրանք կազմում են և կառավարում են միլիցիան ընդհանուր, այդ նպատակով մշակված նորմաներով. և նոյն իսկ այն ժամանակ, երբ պետական պահպանութեան վարչութիւնը՝ միլիցիան գործէ անելիս, նա գտնվելու է ինքնավար մարմինների հսկողութեան տակ.

2) Վարչական մարմիններին չէ կարող յանձնվել դատական ոչ մի ֆունկցիա.

3) Ապօրէնի գործողութիւնների համար վարչական պաշտօնեաները պատասխանատու են դատարանի առաջ ընդհանուր կարգով, ու ամեն մի քաղաքացի իրաւունք ունի գանգատ ներկայացնել դատարանին ադմինիստրացիայի ապօրինի գործողութիւնների դէմ.

4) Համագումարը անհրաժեշտ է գտնում, որ տեղի շինական, բայոնական ու գաւառական ադմինիստրացիայի մէջ իսկոյն իրագործվի լիակատար ազգայնացումն. պէտք է մուծվի գործավարութեան մէջ վրացերէն և այլն։ Իսկ նահանգական ու շրջանային ադմինիստրատիվ մարմինների նացիոնալիզացիան պէտք է իրագործվի աստիճանաբար՝ առանց միւս ժողովուրդների իրաւունքները խախտելու.

5) Ամբողջ ադմինիստրացիան պէտք է լինի ամբողջ յեղափոխութիւնը պաշտպանելու համար և միշտ պէտք է պատրաստ լինի կռւելու հակայեղափոխութեան դէմ.

6) Համագումարը գտնում է, որ այժմ ադմինիստրացիան՝ միլիցիան հանդիսանում է յեղափոխութեան իրաւունքների պաշտպան, և բուռն յորդորում է բոլոր քաղաքացիներին, մանաւանդ զինուորականներին օգտագործել իրանց գիտութիւնը, փորձառութիւնն ու ուժերը այդ պատասխանատու ու պատուաւոր գործի մէջ։

Իրաւաբանական սեկցիայի բանաձևը

Անյապաղ ոչնչացնել շինական դատարանների ինստիտուտը և առանձին գիւղացիական օրէնսդրութիւնը, իբրև հին րէժիմի մնացորդ և դասային իրաւակարգի արտայայտութիւն.

2) վերջ դնել նաև մեժիվոյ դատարանին և նրա գործը յանձնել ընդհանուր քաղաքացիական դատարանին.

3) Մուծել հաշտարար դատարանների ընտրովի ինստիտուտ քաղաքային ու զեմստվային ինքնավարութիւնների կողմից։ Հաշտարար դատաւորների ինստիտուտը պէտք է լինի այդ ինստիտուտի համար երկրորդ ինստանցիա.

4) Շրջանային դատարանը և դատաստանական պալատը պէտք է փոփոխվեն հետևեալ կերպով. շրջանային դատարանը մնում է առաջին ինստանցիա նրան ենթակայ գործերի համար։ Երկրորդ ինստանցիայի համար պէտք է մուծվի երդուեալ ատենակալների ինստիտուտ։

Դատաստանական պալատը մնում է իբրև վճռաբեկ ինստանցիա շրջանային դատարանին ենթակայ քաղաքացիական գործերի համար.

5) Բոլոր ինստանցիաների դատական հաստատութիւնների համար պէտք է սահմանվի մի վճռաբեկ ինստանցիա—սենատ կամ վճռաբեկ դատարան.

6) Դասային գաղմակերպութիւնների երդուեալ և մասնաւոր հաւատարմատարների մասին գոյութիւն ունեցող կանոնները պէտք է վերաքննեն.

7) Պէտք է ոչնչացվեն հաշտարար դատաւորների օգնականների պաշտօնները քննիչների ֆունկցիաներով։ Պէտք է հաստատվի առանձին անկախ քննիչների ինստիտուտ.

8) Վրաստանի հողի վրա դատավարութիւնը բոլոր ինստանցիաներում ընդհանուր կարգով պէտք է կատարվի վրացերէն լեզուով։ Իսկ ազգային փոքրամասնութիւնների իրաւ
ձին օրէնքով,

9) Նոր օրէ
տարանը պէտ
ցող օրէնքների

Ժողովրդական
անութեան
ցիա
ձեւը

1) Ժողովրդակ
պէտք է կազմէ վ
թեան առանձին հո

2) Ժողովրդական
պահպանութիւնը պէ
զբաղմունքի
յի, քաղաքային ինքնավարութիւնների, գործարանային ու զինուորական հիմնարկութիւնների հոգատարութիւնը.

3) Վրացական գլխաւոր վարչութեան կից պէտք է հաստատվի հատուկ բժշկա-սանիտարական մարմին. ա) այդ մարմինը մշակում է այն բոլոր օրինագծերը, որոնք վերաբերում են ժողովրդական առողջապահութեանը. բ) և հետևում է, որպէս զի բոլոր հաստատութիւնների մէջ պահպանվեն բժշկա-սանիտարական օրէնքներ.

4) Առաջին վրացական համագումարը փակելուց յետոյ պէտք է շարունակել ժողովրդական առողջապահութեան աշխատանքը.

5) Դրա համար անհրաժեշտ է, որպէս զի Վրաստանի ժամ. ազգային խորհուրդը ունենայ առանձին մարմին։ Այդ մարմինը ա) պէտք է նիւթ ժողովէ ապագայ վրացական հիմնադիր ժողովի համար. բ) գումարել մօտիկ ապագայում՝ բժիշկների ու բնագէտների ընկերութեան համաձայնութեամբ՝ բժշկա-սանիտարական համաժողով, որը կը պարզէ ժողովրդական առողջապահութեան կազմակերպութեան հարցերը Վրաստանի ինքնավարութեան համար։

ԿԵԱՆՔԸ ԳԱՒԱՌՈՒՄ

ԴԷՊՔԵՐԸ ԳԱՆՁԱԿՈՒՄ

Գանձակ, 27 նոյեմբերի

Դիտէք ինչ դրութեան մէջ է գտնվում այժմս Գանձակը. ահա պատմեմ ձեզ։ Երէկ, կիրակի օրը, երեկոյեան ժամը 5—6 հայոց թաղից լսվում էին մեծ մեծ հրացանաձգեր, որոնք յաճախ էին ունենում Թուրքաց թաղում։ Քաղաքը յուզման մէջ էր, բոլորը թափվել էին փողոցները, չէին իմանում թէ ինչ է պատահել և ինչ է կատարված. յետոյ իմացանք շատ վատ հանգամանքներ. այն է, որ Թուրքաց թաղում, բազարում, ДИКАЯ ДИВИЗІЯ-ի մի զինուոր խփել է մի ռուս զինուոր-պահակի, որ պատրուլները եկել հասցրել են և ուզել կալանել ու սպանել մի սպայի. [illegible] ДИКАЯ ДИВИЗІЯ-ի զինուորները են հաւաքվել ու սկսել իրար դէմ կռւել և կատարել հրացանաձգութիւն։ Երեկոյեան ժամը 8-ին լսվեց, որ սպանված են մօտ 10—15 զինուորներ։ Երեկոյեան ժամը 9-ին, Հայոց թաղում չէին թողնում մարդ դուրս գալ փողոց ու շրջում էին պատրուլները. այդ ժամանակ երկու օֆիցերներ ձիաներով (ДИКАЯ ДИВИЗІЯ-ից) քշած գալիս են լինում (ինչպէս ասում են Ելենենդորֆ կոլոնիայից. այստեղ է գտնվում ДИКАЯ ДИВИЗІЯ-ի մի մասը). պատրուլը, որոնցից պահանջում է կանգնել և յայտնել իրանց ով լինելը. նրանք չեն հպատակվում. այդ պատճառով կրակում են, մեկին վիրաւորում Գանձակ-կովկասյա փողոցի վրայ, միւսին միւս պատրուլները սպանում են ս. Յովհաննէս եկեղեցու մօտերքը։ Այս դէպքը մինչև առաւօտը հէնց կրակում են ու կրակում։ Այսօր առաւօտ, թէ Թուրքաց և թէ Հայոց թաղերում կեանքը մեռած է, բոլոր խանութները կողպ. չեն կարողանում կամ չեն թողնում կամքերից դէպ ու դէն անցնել։ Թուրքաց թաղում հայ ծառայողները չեն գնում այնտեղ։ Գիմնազիա չեն եկել թուրք աշակերտները և բոլոր հայ թէ ռուս աշակերտներին արձակել են. կատարեալ մի խառնաշփոթ դրութիւն է. ինչ է լինելու այս ամենի վերջը։ Կատարեալ անիշխանութիւն, կատարեալ անարխիա. պրովոկացիան երևում է որ զրոյցը է բարձրացնում և եթէ այսպէս գնալու լինի, նա կը հասցնէ մեզ դէպի կործանում։ Ուր է Անդրկովկասեան Կոմիսարիատը. ուր են մեր, կովկասեան ժողովուրդների, համերաշխութիւն և եղբայրութիւն քարոզող միութիւնները, ինչու են լռել. եւ երբ պէտք է նրանք բանի պէտք գան։

Յովս. Խոջայեանց

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՓՈՍՏՈՎ

Ղարաբաղը երկու [illegible] մէջ է

Շուշի, 17 նոյեմբերի

Սովի սպառնալիքը պաշարած է Ղարաբաղին։ Վաղ առաւօտվանից դուք տեսնում էք մարդկանց, կանանց և երեխաների խառն ի խուռն խմբերը պաշարած հացթխարանները։ Մինչև առ. ժ. 10-ը հացթխարանի առաջ վխտում են երեխաները «հաց, հաց» աղաղակելով։ Դպրոցներում կանոնաւոր դասատուութիւն չի լինում, որովհետև անսուաղ աշակերտները չեն կարողանում դիմանալ պարապմունքներին և նրանք 2—3 ժամից յետոյ արձակվում են տները. նոյն իսկ մի քանի դպրոցներում 2—3 օր պարապմունք չը կայ՝ հացի պակասութեան պատճառով։ Ինչ կը լինի այս ամենի վերջը, ինչ կը պատահի մեզ առ-

---

ռուս պատգամախօսներին։ Թրամատներից մինչև առաջին կայարանը նրանք գնացել են երկաթուղով, յետոյ առաջին կարգի վագօնով։ Բրեստ Լիտովսկ կայարանը ողջ է մնացել, բայց քաղաքից ոչինչ չի մնացել։ Պատգամաւորութեանը տեղաւորում են յատուկ այդ առիթով պատրաստված կահաւորված տան մէջ։ Վերաբերմունքը վերին աստիճանի քաղաքավարի էր։ Քաղաքական թեմաներ չը շօշափվեցին։ Երբ Հօֆմանը իմացաւ, թէ ինչ է պատգամախօսների պահանջը, տեղից ցատկեց անէծքը շրթունքներին, բայց շուտով հանգստացաւ։ Թիւրքիայի ներկայացուցիչը տուեց նշանակալից խոստումներ և հաստատ ցանկութիւն յայտնեց, որ Թիւրքիան շուտով առևտրական կապեր հաստատի Ռուսաստանի հետ։

✖ Անգլիական դեսպան Բիւքէնէնը լրագրողների հետ ունեցած զրոյցի ժամանակ յայտնեց, որ Անգլիան անկեղծօրէն տրամադիր է յօգուտ Ռուսաստանի և ցանկանում է պաշտպանել Ռուսաստանին այս ճգնաժամային վայրկեանին։ Պատասխանելով իրան տրված հարցերին Բիւքէնէնը յայտնեց, որ Ռուսաստանից Անգլիայի հպատակների մեկնելու գործը կը հարթվի։ Տրոցկիի վերջին նամակը հեռագրով յայտնված է Լոնդոն։ Բիւքէնէնը համոզված է, որ Անգլիան հաշտութեան պայմանները կը քննի մի այնպիսի կառավարութեան հետ, որը կը ճանաչվի ամբողջ ժողովրդի կողմից։

✖ Հաղորդում են, որ այժմ Պետրօգրադումն է գտնվում Ստոկհոլմի գերմանական դեսպանատան խորհրդատու Լիւցիուսը, որը յայտնի է նախկին, ցարական մինիստր Պրոտոպոպովի հետ վարած բանակցութիւններից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՐՊՈՒՍԸ

Զօրակայանից Անդրկովկասեան Կոմիսարիատը ստացել է հետևեալ հեռագիրը.

«Նոյեմբերի 12-ի հեռագրով կովկասեան զօրաճակատի շտաբին յայտնված է գերագոյն զօրահրամանատարի շտաբի պետի համաձայնութիւնը հայկական կորպուս կազմելու մասին և տրված է թոյլտւութիւն այժմ իսկ ձեռնարկել կորպուսի շտաբի կազմման։ Գերագոյն զօրահրամանատարի շտաբի պետի հրամանը կարող է տրվել միայն այն ժամանակ, երբ կը ստացվի կովկասեան զօրաճակատի շտաբից մանրամասն տեղեկութիւններ կազմակերպութեան պլանի մասին։

«Գեներալ Մաւորին»

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Այսօր քաղաքային դումայում բացվում է անդրկովկասեան քաղաքների ներկայացուցիչների համագումարը։ Ներկայացուցիչներ եկել են նահանգական և գաւառական բոլոր քաղաքներից։

※ Յիշեցնում ենք հայ հասարակութեան, որ այսօր Արտիստ. Թատրոնում կայանալու է դերասան Ա. Մամիկոնեանի յոբելեանական ներկայացումը։

◆ Մօտ ժամանակներս Թիֆլիսում գումարվելու է զինուոր. 2-րդ համագումարը Կովկասեան ճակատի զօրքերի պատգամաւորներից։ Այդ առիթով երկրային կենտրոնը դիմեց քաղ. վարչութեան, խնդրելով համագումարին տալ անկողնաշորեր և ամանեղէն 1200 մարդու համար։ Քաղ. վարչութիւնը յարգեց այդ խնդիրքը։

◆ Երէկվանից պակասեցվեց ազգաբնակութեանը տրվող հացի չափը. 3/4 ֆունտը իջեցվել է 3/8-ի. դրա հետ տրվում է և 1/4 ֆունտ պաքսիմատ։

◆ Նահանգական պարէն. կոմիտէն կազմել է առանձին յանձնաժողով, որը պէտք է ընդունի գործերը քաղ. պարէն. կոմիտէից և յանձնի քաղ. վարչութեան։

◆ Լրագրավաճառների պրոֆեսիոնալ միութեան վարչութիւնը որոշել է դեկտեմբերի 1-ից լրագրերը վաճառել առաւօտեան ժամը 7 և կէսից մինչև երեկոյեան 7 և կէսը։

◆ Թիֆլիսում, նոյեմբերի 24-ին, Արամեան հիւանդանոցում, վախճանվել է Երևանի երդուեալ հաւատարմատար Գաբրիէլ Մնացականեանը, որի յիշատակին և տպվեց «Մշակի» մէջ Սա. Ղորղանեանի յօդուածը։

◆ Մեզ հեռագրում են, թէ սեբաստացիք ունեցել են առաջին համագումարը, ուր ընտրել են պատուաւոր անդամներ՝ Անդրանիկին և Մուրադին և յանձնել են Լեւոն Լազեանին կազմակերպել Կովկասում սեբաստացիների միութիւն։

◆ Քաղ. վարչութիւնը առաջարկեց միլիցիոնների քաղ. միլիցիոնների թիւը աւելացնել 80 հոգով։

※ Նոյեմբ. 29-ին զին. և ծով. մինիստրութեան գործերի կոմիսար Դ. Դ. Դոնսկոյը մեկնեց ռազմաճակատ։

※ Այսօր պետական թատրոնում նշանակված է շնորհալի դիրիժոր Գոնեյլի բենեֆիսը։ Կը ներկայացվի 1) «Իօլանտա» և 2) իր հեղինակութիւնը «Սէր և յանցանք»։

◆ Վաղը Արտ. Ընկ. թատրոնում նշանակված է տաղանդաւոր կոմիկ Նիրովի բենեֆիսը։

◆ Կովկասեան ճակատի զօրքերի հրամանատարը թոյլատրել է կարճ ժամանակով արձակուրդ տալ 100 զինուորից տասին։

※ Ամսիս 27-ի գիշերը քաղաքի շրջակայքում ձիւն եկաւ, որի հետևանքով միանգամից ցրտեց քաղաքում։

※ Մի երկու օրից լոյս կը տեսնի «Գրական Գեղարուեստ. Ալմանախի» 3—4 միացեալ գիրքը։ Այս գրքում յօդուածներ ունեն՝ Վահան Տէրեան, Ստ. Զօրեան, Վ. Վալադեան, Արմ. Տիգրանեան, Գ. Բեալաշեան և ուրիշներ։ Գրքում տեղ է գտել Մ. Մանուէլեանի «Կեցցէ կեանքը» նոր 3 գործ. դրաման։

◆ Առաջիկայ կիրակի, դեկտեմբերի

...ր մինչև առաջիկայ մայիսը. անկարելի է դաշտակութիւնները անել, սակայն դարձ է ամենից առաջ, որ Ղարաքալը ծանր երկաթի մէջ է։

Տեղտնում թէև կայ պարենաւորման վարչութիւն, կան գործօն անձանցներ ժողովրդին սովի ճիրաններից ազատելու, սակայն ժամանակը այնքան չարագոյն է, որ նոյն երան նպաստում է սովի ուրուականին ժողովրդին շրջապատելու։

Ասում են, որ Ելաւխ կայարանում հացի պաշար կայ կուտակված, սակայն չը կան բեռնակիր սայլեր՝ կրելու։ Թուրք ֆուրգոնչիները պուդը 8 ր. պակաս չեն բերում, իսկ հայ սայլապանները չեն վստահանում գնալ Ելաւխ, իրենց լծկաններից չը զրկվելու պատճառով։ Այդ ճանապարհը չը խաղաղվեց աւազակներից և մութ տարրերից։ Նոյն իսկ 3 օր է՝ քաղաքը կտրած է մթութեան մէջ՝ նաւթ չը լինելու պատճառով։ Սայլեր չը կան, որ Ելաւխից նաւթ բերեն։ Վերջերս նաւթի ֆունտը ծախվում էր 1 ր. Պարենաւորման վարչութեան անդամները խորհուրդ-խորհրդի վրա են կազմում այս սակերն մի ելք գտնելու։

Աւելի վատ է գիւղերի վիճակը. մեծ մասը ուտելու հաց չունի։ Այս տարի առատ է կաղինն ու հաճ. ..., որից արդէն շատ տեղերում հաց են թխել և կերել։ Սուսեն ու թէյը այժմ պատրաստում են կաղիններից, որովհետեւ թէյի ֆունտը բարձրացել է 30 րուբլու։

Պետ

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՀԻՒՍ. ԿՈՎԿԱՍՈՒՄ

Վլադիկավկազի երկաթուղու կառավարիչը յայտնում է.

«Օր սախս 25-ին [illegible] Գրօզնիի և Պետրովսկի գծերի վրա դրութիւնն այստեղ յուսահատական է։ Երթեւեկութիւնը բոլորովին կանգ է առել։ Շատ կիսակայարաններ այրվել են։ Այրվել են նաև նոր համբարդիւնարաններ։ [illegible] վտանգի մէջ են։ Ամբողջ գիծը [illegible] է [illegible] վառելիքի։ Գրօզնիից ստացված տեղեկութիւնների համաձայն՝ զինուորական օգնութիւն համարեա թէ չը կայ։ Զինուորները [illegible] են, որ Գրօզնիի գործիչներ և Խասավ-Յուրտի զէնքեր յանձնեն կազակներին այսօր ժամը 2 ին։ Հաղորդակցութիւնը ընդհատված է։ Ենք երկաթ. վարչութիւնը խուսափում է [illegible] հետ, որը յայտնեց, թէ միջոցներ ձեռք առնելու հնար չը կայ։ Գծերի վրա երթեւեկութիւն համարեա չը կայ։ Հասարակական երթեւեկութիւնը ամբողջ գծի վրա դադարելու է, քանի որ Գրօզնիից վառելիք չի ստացվում։ Գրօզնիից մինչև Խասավ-Յուրտ տարածութեան վրա գտնվող բոլոր ծառայողները հեռանում են. աշխատել չեն կարողանում։

«Գուդերմէսը առ այժմ ազատ է, բայց այնտեղ թալանված է 100 վագոն։ Գրօզնի-Գուդերմէս շրջանում հրդեհված են փայտէ կամուրջները։ Այսպիսով երթեւեկութիւնը կանգ է առնելու բոլոր գծերի վրա։

ԴԷՊՔԵՐԸ ԹԵՐԵՔԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Զանազան յուզիչ տեղեկութիւններ են ստացվում Թերեքի շրջանից, ուր տեղի են ունենում շատ լուրջ դէպքեր։

Նոյեմբերի 19-ին կօզակների և ինգուշների միջև կայացաւ զինադադար զէնքերը ժողովելու և հաշտութեան պայմանագիր մշակելու համար։ Զինադադարը սկսվեց նոյեմբերի 18 ի երեկ. ժամը 9-ից, թէև երկու կողմերը մնում են խրամատների մէջ։

Ինչպէս պատմում են, ինգուշներից սպանվել են մօտ 10 մարդ, վիրաւորվել են մօտ 15 հոգի։ Կօզակներից սպանվել են ու վիրաւորվել են նոյնքան։

Նոյեմբերի 18-ին միջադէպը հարթելու համար Պլիէվօ եկան կովկասեան զօրքի հրամանատարի հեթնապահ գեներալ գնդապետ Մօխաշէվը և զինուորական կօմիսարի օգնական Անդրէևը։ Նրանք կայացրին ինգուշների խորհրդակցութիւն, ուր վերջինները յայտնեցին, թէ այլևս արիւնհեղութիւն չեն ցանկանում և սպասում են զինադադարի՝ հաշտութեան պայմանները մշակելու համար։ Պատգամաւորները հարցրին Մեադեանիկին, թէ կարելի է, արդեօք, առաջնորդելով գալ կօզակների բանակը բանակցելու համար։ Մեադեանիկը պատասխանեց, թէ կօզակների ռազմի տրամադրութեան պատճառով անհնարին է գալ։ Այն ժամանակ պատգամաւորները դիմեցին «Կոբարուլադ» կայարանը և այնտեղից Կուբանի բանակի ներկայացուցիչների հետ միասին եկան գնացքով Պլիէվօ խորհրդակցութեան։

Կօզակները առաջադրեցին հետևեալ պահանջները. անմիջապէս զինաթափ անել բոլոր լեռնականներին և տալ պատանդներ պատուաւոր մարդկանցից հաշտութիւնն ապահովելու համար։

Լեռնականները պատասխանեցին, թէ նրանք չեն վախենում կռւել, թէև սպանդներ չեն ուզում. բայց չեն տայ զինաթափ անել իրանց և պատանդներ տալ հրաժարվում են, համարելով այդ ամօթաբեր։

Կողմերը որոշ եզրակացութեան չը յանգեցին, միայն կռուեցին զինադադար։

Հաշտութեան պայմանագրի յետագայ մշակութեան համար նոյեմբերի 20 ին նշանակվեց ինգուշների և կօզակների համագումար Վլադիկավկազում։

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

ՌՈՒՍ-ՌՈՒՍԱԿԱՆ ՖՐՕՆՏ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

(Մեր սեփական թղթակցից)

VII

Մօսկվա, 13 նոյեմբերի

Այսօր թաղեցին ուսանողներին։ Ամբողջ քաղաքը, բարձր հոգևորականութիւնը, ուսանողութիւնը բոլորը ներկայ էին. փողոցները մարդկային ծով էին դարձել. կարգապահութիւնը օրինակելի էր և նմանը չը տեսնված. 37 հատ հասարակ փայտէ դագաղներ օրիորդները իրանց ուսերի վրա էին տանում։ Ոչ մի պսակ չը կար (այդ մասին ուսանողութեան կողմից էր խնդրված). ժողովրդի սրտի փղձուկը և անկեղծ ցաւը սրանց պսակն էր, իսկ լուռ արտասուքը՝ դամբանական ճառերը։ Կարծեմ աւելի թանգագին պսակ և պերճախօս ճառ չէր կարող լինել։ Բոլոր հիմնարկութիւնները ուղարկել էին իրանց պաշտօնական ներկայացուցիչները. հարիւրաւոր լուսանկարիչներ և սիրողներ ամեն քայլում նկարում էին երթը։

Մոռացայ իր տեղին գրելու, որ յաղթական պատերազմից յետոյ՝ նոյեմ. 4-ին բօլշևիկները շատ խիստ «приказъ»-ներ կպցրին պատերին, որ տնատէրերը պարտաւոր են մինչև 24 ժամը անպայման կերպով տների, խանութների և մարդկանց կոտրված և ջարդված ապակիները նորոգել. չը հնազանդվողին պատժում էին տուգանքով և բանտով։ Շատ տարօրինակ է. 100000 հոգով 7 օրվայ ընթացքում իրանց ջարդած հսկայական մեծութեամբ ապակիները պահանջում են 24 ժամում նորոգել, իսկ աւելի տարօրինակը նա է, որ այդ «приказъ»-ի երկրորդ օրվանից և ամեն օր իրենց թերթում մի վաճառականի յայտարարութիւն է տպվում, որ ամեն ձևի և ամեն մեծութեան ծախու ապակիներ մեծ պաշար ունի։ Չը գիտեմ, սա մի հասարակ զուգադիպութի՞ւն է թէ «տօվարիշչական» խնդիր է. միայն թէ յայտարարութիւնը բացի իրանց թերթից Մօսկվայի ուրիշ ոչ մի թերթում չէ տպվում։

Նոր «приказъ».—Ով որ իրաւունք չունի զէնք պահելու, բոլորը պարտաւոր են իրանց զէնքերը յանձնել կառավարութեան։ Բնակարանների կօմիտէները և բնակիչները նախ առանձին-առանձին, ապա բոլոր կօմիտէների ներկայացուցիչները միասին ժողով արեցին և խիստ բողոքեցին, բացատրելով որ ներկայումս Մօսկվայում ոչ կեանքի և ոչ էլ գոյքի ապահովութիւն չը կայ. խուլիգանների աւազակութիւնները վերջ չունեն, նոր կառավարութեան կօմիսարները իրանք են թալաններով զբաղվում, այնպէս որ զէնքերը տալ չեն կարող։ Պէտք է խոստովանել, որ մինչ օրս բոլոր «приказъ»-ները, որ տպվել և փողոցների պատերին կպցվել են, ինչպէս երևում է, լոկ կարդալու համար է, որովհետեւ ոչ ժողովուրդն է հպատակվում այդ «приказъ»-ներին և ոչ էլ իրանք բօլշևիկները են պնդում կամ հետևում։

Գաբրիէլ Շահբազեան

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

— o —

ՀԱՅ ԴՐԱՄԱՏԻԿ ԸՆԿ. ԽՄԲԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Պատուի համար

Տաղանդաւոր դրամատուրգ Շիրվանզադէի այդ վերնագիրը կրող երկը Հայ Դրամատիկ Ընկ. խումբը նոյեմբերի 27 ին առանձին աջողութեամբ բեմադրեց։ Դրաման թէև հասարակութեան ծանօթ ու շատ անգամ է խաղացված, բայց և այնպէս նա լցրել էր թատրոնը։ Տիկին Սեւումեան իր մաշված, չափած ու կշռած խաղով շատ ոգևորեց հասարակութեանը ու բուռն ծափահարութիւններ և երկու պսակ թարմ ծաղիկներ ստացաւ։ Տիկ. Զարեյի թատրոնական այդ վաղեմի դերասանուհին, ինչպէս և միշտ՝ բարեխղճաբար էր վերաբերվել իր առանձնած դերին։ Նրա խաղի ժամանակ կարելի էր նկատել, որ ոչ մի խօսք դերի մէջ փոխված, ետ ու առաջ դրված, ըստ իրան—ինչպէս այդ անում են միւսները—արտասանված չէր, այլ նա խօսում էր հեղինակի բառերով, գործում էր հեղինակի ցուցմունքների համաձայն։ Դա մի առանձին պլիւս է տ. Զարեյի համար, և ցանկալի կը լինէր, որ ուրիշներն էլ հետևէին նրա օրինակին։

Առանձին շնորհք խաղաց տ. Արուս-Ոսկանեանը և Րօզալիայի փոքրիկ և անշքան դերին թէ իր հագուստներով և թէ շնորհալի ձևերով առանձին գոյն տուեց։ Բեմի վրա տեկկինը իրան չափազանց ազատ ու ընտելացած է զգում, որ շատ լաւ տպաւորութիւն է գործում հասարակութեան վրա, որի ուշադրութիւնը նա բոլոր ժամանակ իր վրա է պահում։

Աչքի է ընկնում պ. Սեւումեանը իր գիտակցական վերաբերմունքով դերի ուսումնասիրութեանը։ Երևում էր, որ նա թէ բերանացի գիտէր իր դերը և թէ զբաղվել էր իր ներկայացրած տիպի ընտրութեամբ։

Սկսնակ գլխաւոր—ուժի Ներէն ու Մարգարիտ ընդգծեցին իրանց խաղը, մանաւանդ Մարգարիտ, որ իր օրինակելի հագնուածքով շեշտեց սալօնական աղջկան դերը։

Գեղեցիկ էր սկսնակ դերասան Աբգարեանի գրիմը։

Ընդհանրապէս ամեն տեղ երևում էր փորձված ռեժիսոր պ. Սեւումեանի ձեռքը, որի խաղը առանձին ճշգրտութեամբ նկարեց Անդրէաս Եղիազարեանի ատոր պատկերը։ Մեզ համար անհասկանալի էր, թէ ինչի Արտաշէս Օծարեանի դերը տրված էր պ. Ոսկանեանին, այլ ոչ պ. Ալիխանեանին։ Որքան մենք առաջինը տեղ-տեղ ենք տեսնում բեմի վրա, նոյնքան երկրորդը ուշ ուշ է և յետմ հասարակութեանը։ Հրաւիրում ենք այս երևոյթի վրա ռեժիսորի ուշադրութիւնը։

Շատ լաւ էր նաև Մամիկոնեան bon vivant Սուրէնի դերում։ Հասարակութիւնը նրա խաղին ուշադրութեամբ վերաբերվեց և երևի նոյն ուշադրութեամբ կը վերաբերվի և նրա 25-ամեայ յօբելեանին, որ տօնվում է նոյեմբերի 30-ին, այսօր, Սունդուկեանցի «Պէպօ», և «Օսկան Պետրովիչը դժոխքում» պիէսների բեմադրութեամբ։

Ներկայ սէզոնի հայ ներկայացումները շեշտակի աչքի են ընկնում նրանով, որ միշտ ամբողջութիւնը պահպանված է լինում և երկրորդական դերակատարները անբիծ պատրաստված։ Այդ խրախութիւնը պատիւ է բերում ռեժիսորին։

* *

ՄԱՄՈՒԼ

ՎՐԱՑ ՄԱՄՈՒԼԸ ՍԵՓԱՐԱՏ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թիւրքիայի հետ սեպարատ հաշտութիւն կնքելու առթիվ վրաց «Սաքարթվելօ» թերթը հետևեալն է գրում։ Առաջ ենք բերում «Հորիզոնի» թարգմանութեամբ։

Բաղձն ամէս տեսրինաց, որ վրաց ժողովրդին՝ ամէնց նրա կեանքը հաշտեցնելու՝ նրա ժիւնին եւրոպական և ասիական ազգերի հետ մէջ։ Մեծ դժբաղդութիւն կը լինի նոյնպէս, եթէ այժմ էլ հաշտութիւնն այնպէս կնքեն, որ վրաց ժողովրդի ձայնը չը լսեն։

Միջազգային իրաւունքների տեսակէտով Անդրկովկասում միմիայն Վրաստանն ունի իրաւունք Թիւրքիայի հետ հաշտութեան բանակցութիւններ սկսելու, քանի որ Ռուսաստանի կառավարութեան լուծվելուց յետոյ՝ 1783 թուի դաշնադրութեան համաձայն՝ Վրաստանը նորից ձեռք է բերում իր անկախ սուվերէն գոյութիւնը։

Գուցէ այսօրվայ տրտաքներն այժմեան դրութիւնը մեզ պարտաւորեցնում է դարձեալ հին օրինաւորութեան կողմը մնալու, բայց մենք պէտք է աշխատենք, որ Վրաստանի հարցն՝ Հայաստանի ու Բէլգիայի հարցի նման՝ միջազգային դառնայ։

Պատերազմող պետութիւններն ինչպէս յեղափոխութիւնից առաջ, այնպէս էլ նրանից յետոյ իրանց բանակցութիւնների ընթացքում ոչ մի կերպ չէին արտասանում Վրաստանի անունը. Նոյնիսկ Ստոկհոլմի պացիֆիստական սօցիալիստական կօնֆերենսում Կովկասեան ազգերից միմիայն հայերն են յիշվում։

Եթէ սօցիալիստներին հարցնենք, մեր տեսութիւնը նրա համար չի յիշվում, որ իբր թէ Վրաստանը պատերազմի ասպարէզ չի եղել. Բայց դա ճիշդ չէ. Մինչև Ռուսական Վրաստանի սահմաններով [illegible] պատերազմի ասպարէզ չը դարձաւ, մինչև նա չանցաւ ռուսական կօրպուսի և թիւրք [illegible] ձեռքով։ Մինչև [illegible] Աջարանն ու [illegible] կարիք չունի նրա արդիական վերանորոգման, որքան ունի Բէլգիան։

Սակայն Վրաստանը միայն Ռուսաստանի հետ վիճ չէ գտնվում, որ հաշտութեան ժամանակ ամոնան նրան որպէս պատերազմի ասպարէզից դուրս գտնվողի։ Թիւրքիայի հետ հաշտութիւն կապելիս պէտք է վճռվի նաև նրա ռուսական զօրքերի կողմից գրաւված մասի բաղդը, և այդ մասում բացի Հայաստանից գտնվում է նաև Վրաստանը, այսինքն Տրապիզոնի վիլայէթի արևմտեան սանջակները, Ճանէթը, Բաթումն ու Սպիրը։

Այդ բանի հասկացել էին նոյնիսկ Միլիւկովն ու Տերեշչենկոն, որի պատճառով նրանք նուաճված Թիւրքիայի համար երկու տեսակ վարչութիւն հրատարեցին, Տրապիզոնի վիլայէթը Հայաստանից բաժանեցին։

Ճանէթն ու Լազիստանը չը պէտք է վերադարձվեն հին պայմանով Թիւրքիային, ինչպէս չը պէտք է վերադարձվեն նոյն պայմաններով նաև Հայաստանը կամ Թիւրքահայաստանը. Վրաստանն այդ մասը եթէ անկախութիւն չը ստանայ, պէտք է նրան գոնէ ինքնավարութիւն տան՝ Տրապիզոնը մայրաքաղաք դարձնելով։ Մի խօսքով՝ Վրաստանի քաղաքական ու ազգային շահերը պէտք է անխափ կերպով պաշտպանված լինեն հաշտութիւն կնքելիս, ինչպէս ռուսական, այնպէս և թիւրքական հողի վրա։

Վրաց լրագիրը մոռանում է սակայն, որ վրացի հասարակական և քաղաքական գործիչները համաձայնութիւն տուած լինելով սեպարատ հաշտութեան Թիւրքիայի հետ՝ ուրիշ գնալով ընդդէմ դաշնակից պետութիւնների, դժուար թէ դաշնակից պետութիւնները ի նկատի ունենան Վրաստանի և վրաց ազգի շահերը։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Թիֆլիս, 24 նոյեմբերի

Զանազանից նեղ մի խմբակ քաղաքական պարագ է զգում օրը օրին նորանոր յայտնութիւններով լցնել «Մշակի», «Վան-Տոսպի» և «Հայաստանի» էջերը։ Նրանք գրում են Ալաշկերտից և Խնուսից. Նրանց նիւթն է Հ. Գիւղատնտ. Ընկ. Ալաշկերտի պաշտօնէութիւնն [illegible] ութիւնը աւելի ես է թշնամանում գրող պարոններին։

Մենք կարծում էինք, որ ալաշկերտցիների համագումարը՝ ժողովրդի ձայնը պիտի լռեցնէր մեղաւոր կողմը՝ ճշմարտութիւնը պարզելուց յետոյ։ Նա երկար զբաղվեց այդ խնդիրներով և առաջ էր հանկարծական և համոզական խօսքը։ Նրա բոլոր որոշումները և բանաձևերը լոյս տեսան «Աշխատանք» թերթում. բայց մեր գաղափարական (նրանք այդպէս են անուանում իրանց) հակառակորդները էլի շարունակում են իրանց անողոք կռիւը՝ գաղափարական հողի վրա.... Այս կարի մարգարիտները շարված են «Մշակ» թերթի № 212-ում Ա. Աթոս և № 247-ում՝ Շարուր կեղծ ստորագրութիւններով։

Մենք արժէք չենք տալիս այդ մարգարիտներին և նրանց պատասխանելու պատիւ չենք անում մեր «գաղափարական» հակառակորդներին. բայց կասենք հետևեալը, որ Գիւղատնտ. Ընկ. պաշտօնէութիւնը միշտ իրան համարել է ժողովրդի անկեղծ բարեկամ, նրա ցաւերին ցաւակից և բարօրութեանը նախանձախնդիր։ Իսկ եթէ Աթոս և Շարուր կեղծ ստորագրութիւնների տակ ծածկված անհատները ոգի ի բռին ջգնում են յանձին նրանց տեսնել գզմաղարներ և ժողովրդի արիւնը ծծող տզրուկներ, կը մնայ որ այդ բոլորը ապացուցեն։ Դրա համար էլ մենք այդ երկու պարոններին և նրանց խմբակին կանչում ենք միջնորդ դատարանի։

Մեր ներկայացուցիչներն են ընկեր Տ. Զօրեան, Աշոտ Իօաննիսեան, Սանդրօ Բալալեան, Ցոնոբ Նիշարեան և Ալաշկերտի գիւղացիական խորհրդի ներկայացուցիչները, որոնց ընտրութիւնը և քանի հոգի լինելը թողնում ենք իրանց։

Չը մոռանամ յայտնել, որ Գիւղատնտեսական Ընկերութեան լիազոր Օծարեանը մի անգամ ևս նրանց հրաւիրեց միջնորդ դատարանի «Հորիզոնի» միջոցով, մեր կողմից նշանակելով գիւղական կօմիտէներին, բայց մեր «գաղափարական հակառակորդները» խուսափեցին և էլի շարունակեցին իրանց «գաղափարական» ասպարէզում «Մշակի» միջոցով ընթերցողների միտքը պղտորել։

Մենք ճանաչում ենք մեր դէմ կանգնած անհատների քաղաքական և հասարակական արժէքը և գիտենք նրանց փորի ցաւը, դրա համար էլ միշտ արհամարհել ենք և արժէք չենք տուել նրանց գրպարտութիւններին և բամբասանքներին։ Մեզ զարմացնում է միայն մեր պ. պ. խմբագիրների վերաբերմունքը այդ խնդիրների առթիւ։ Մարդիկ մեզ մեղադրում են հակոյական զեղծումների մէջ, բայց ծածկված են կեղծ ստորագրութեան տակ։

Ինձ մեղադրում են շատ մէջ (յիք կնոջ ծեծը և վէճը), հեռագրում են այդ մասին առանց ստորագրութեան և այս բոլորը առանց որևէ նկատողութեան հրատարակում են մեր փորձառու խմբագիրները*).

Գիւղատնտեսական Ընկ. Ալաշկերտի պաշտօնէութեան «գաղափարական հակառակորդները» ինչ իրանց գրածներից պարզ է, որ նրանց դարդ ու կրակը ես եմ, նրանք ինձ հետ հաշիւ ունեն։ Դրա համար էլ կառաջարկէի իմ հակառակորդներին որ ի զուր տեղը չը հոլովեն ոչ Գիւղատնտեսականի և ոչ էլ իմ միւս ընկերների անունները, ինչքան են ծուռ ու մուռ ճանապարհներով ընթանում, խնդիրը ընդհանրացնում և աղմկում Գիւղատնտեսական Ընկերութեան մաքուր անունը և իդէալական գործունէութեան վրա արատ գցել։ Ցանկալի է այն մարդը, ով իր [illegible] հասարակութեանը։ Ես վստահ եմ, որ այս բոլորից յետոյ իմ հակառակորդները մէկ կողմ կը գցեն իրանց և բերեց կասկածի քօղը, կը գան միջնորդ դատարան ու կապացուցանեն իմ քաղաքական հրէշ լինելը (ես այլ կերպ չեմ կարող որակել մէկին, որը ջարդված ժողովրդի համար եկած կօպէկին ծուռ աչքով է նայում), և կամ ես կապացուցեմ նրանց զզուելի, ստախօս և զրպարտիչ լինելը։

Եթէ այս անգամ էլ մեր գաղափարական հակառակորդները չը բարեհաճեն գալ միջնորդ դատարան և էլի շարունակեն իրանց «գաղափարական» տողերը, մենք զարձկանենք այն ժամանակ պ. պ. խմբագիրների հետ։

Պահանջում ենք նաև որ միջնորդ դատարանի բոլոր որոշումները լոյս տեսնեն հայկական բոլոր թերթերում։

Այս է մեր վերջին խօսքը։

Գիւղատնտեսական Ընկ. Ալաշկերտի հրահանգիչ Բ. Աբոյեան

---

*) Յօդուածագիրը զուր տեղ մեղադրում է խմբագիրներին. նրանք տպելով թէր և դէմ յօդուածներ՝ մի նպատակ ունեն—պարզել ճշմարտութիւնը։ Խմբ.

Խմբագիր-հրատարակիչ՝
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ

[illegible]

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
հիմնված 1880 թ.
(Թիֆլիս, [illegible])
Բաց է
[illegible]
«606» և «914»-ի ներարկում [illegible]
ԲԺԻՇԿՆԵՐԸ
Բ. Ս. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական (սիֆիլիս) հիւանդութիւններ.
Բ. Գ. ԱՂԱՄԱԼԵԱՆ—10 կէսից—12 կէս ժ. ներքին հիւանդութիւններ.
Մ. Գ. ԱՐՇԱԿԵԱՆ—11 կէսից—1 կէս ժ. [illegible]
Մ. Ե. [illegible]—12—1 ժ. [illegible]
ԽՈՐՀՈՒՐԴԸ
[illegible]
Պատասխանատու Բ. Նաւասարդեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՖԵԼԴՇԵՐ ԲԺՇԿ.
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Մասնագէտ վեներական, ջղային և սեռական թուլութեան հիւանդութիւնների։ Նեղը հիւանդներին ցոյց եմ տալիս յայտնի մասնագէտ բժիշկների։ Օտարերկրեայ հիւանդներին ուղարկում եմ դեղատոմսեր և բեչեթներ։ Հիւանդների ընդունելութիւնը նախօրօք պայմանով։ 5—6 ժամը։ Հասցէն՝ Тифлисъ Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г. Есаяну վերին յարկ։
Ծախվում են ինձ մօտ իմ կազմած
1) «Փորձանքները առանց բժշկութեան» գինը 50 կ.
2) «Տրիպեր և բժշկութիւնը, բեչեթներ.» գինը 40 կ.
3) «Ենկեարմատի շալվարը» ծիծաղ. վօդէվիլ 20 կ.
4) «Մաֆֆիի համառօտ կենսագր.» 10 կ.
Գրքերի գինը և ճանապարհածախսը 20 կ. առաջուց ուղարկել։
Նամակով փող կամ մարկա ղրկել։
(հ. կ.) 374. 100—60

ԿԱՏԱՐՎՈՒՄ ԵՆ
ԲԺԻՇԿ Վ. ԽԱՉԱՏՐԵԱՆՑԻ
հետեւեալ աշխատութիւնները.
1) Անդրադարձ (возвратный) տիֆ 30 կ.
2) Բծաւոր (сыпной) և որովայնի (брюшной) տիֆ 30 կ.
3) Волосы—(մազերի հիւանդութ.) 10 կ.
4) Բաղձմնութիւն, արտասովական ամլութիւն և հակաբեղմնաւորական միջոցներ 35 կ.
5) Սիֆիլ. և Հօթա-Էրլիխեան «606» 15 կ.
Գրքեր ստանալու համար վաղօրօք ուղարկել գրքերի գինը և 25 կ. ճանապարհածախս։ Հասարակ նամակով դրամ կամ մարկա չուղարկել։
Հասցէ՝ Тифлисъ, Вознесенская ул. № 8. кв. Д-ра В. А. Хачатрянца.
1389 20—14

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ՅՈՎՀ. ՅԱԿՈԲԵԱՆԻ
ԳԵՐՄԱՆ ԴԱՒԸ ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ
Առանձին գրքոյկով
Գինն է 1 ր., ճանապարհածախսով (պակաղով)՝ 1 ր. 40 կ.
Դիմել «ՄՇԱԿԻ» խմբագրութեան։
Վերադիր վճարով պատուէր չէ ընդունվում։
0—15

„Մշակի“ խմբագրատանը վաճառվում են
Հետևեալ թատերական երկերը
1) Հասարակութեան թշնամին, Հ. Իբսէնի, թարգ. Լ. Բաբայեանի 50 կ.
2) Նոր կեանքի շեմքում, դրամ.— էտիւդ գաւառ. կեանքից, Ա. Փ.-ի 40 կ.
3) Նշանվածներ, պիէս 3 գործ., Ալ. Աբէլեանի . . . . 60 կ.
4) Ուսանողներ, 3 գործ., Գ. Բաշինջաղեանի . . . . 60 կ.
5) Կայենի ճանկերում, դրամա 5 գործ., Ալ. Առաքելեանի . . . 80 կ.
6) Մագդա, դրամա 5 գործ., Լևոն Մանուէլեանի . . . . 40 կ.
Վերադիր վճարով պատուէր չէ ընդունվում
ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍԸ ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒԻՆ ՎՐԱ

Լոյս տեսաւ և վաճառվում է
ՅԱԿՈԲ ՏԷՐ-ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ
Տաճիկ-Գարաճիսարի ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ
115 ԷՋ, ԳԻՆԸ 2 ՌՈՒԲԼԻ
(Արևմտահայ բարբառով)
Դիմել հեղինակին՝ Երևանեան հրապարակ և Թիֆլիսի գրավաճառներին։
(հ. կ.) 1403 10—5

Типографія „ЭКОНОМІЯ“ Тифлисъ